

Կ-877⁶-22.10.2015,03.11.2015-SՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔ

«ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի մայիսի 14-ի ՀՕ-118 օրենքում (այսուհետ՝ Օրենք) «ԱԱՀ-ի հաշվարկ» բառերը համապատասխան հոլովաձևերով փոխարինել «ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկ» բառերով համապատասխան հոլովաձևերով:

Հոդված 2. Օրենքի 6.1 հոդվածի՝

- 1) 3-րդ մասի առաջին պարբերությունն ուժը կորցրած ճանաչել,
- 2) 5-րդ մասից հանել «, իսկ ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների դեպքում՝ հաշվանցված» բառերը:

Հոդված 3. Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետում «տնկանյութի» բառից հետո լրացնել «, ինչպես նաև ԱՏԳ ԱԱ դասակարգչի 0106 41 000, 0106 90 00 90, 5305 00 000 0, 9406 00 310 0 ծածկագրերին դասվող ապրանքների» բառերը:

Հոդված 4. Օրենքի 16-րդ հոդվածի՝

- 1) 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝
«2) օդանավակայանում գործող անմաքս առևտրի խանութից ապրանքների մանրածախ վաճառքը միջազգային երթուղիներով մեկնող և ժամանող ուղևորներին, ինչպես նաև այլ հարկ վճարողների կողմից այդ ապրանքների մատակարարումը անմաքս առևտրի խանութի կազմակերպչին.»»,

2) 12-րդ կետում «հաշվանցման և (կամ) վերադարձման օրենքով» բառերը փոխարինել «մուտքագրման միասնական հաշվին «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հավելված 1-ով» բառերով:

Հոդված 5. Օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ կետի երրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Սույն օրենքին համապատասխան ԱԱՀ վճարող համարվելուց դադարած անձանց մոտ ԱԱՀ վճարող համարվելուց դադարելու օրվա դրությամբ առկա կամ ԱԱՀ վճարող չհամարվելու ժամանակաշրջանում առաջացած ԱԱՀ-ի դեբետային մնացորդը հետագայում կարող է մարվել ԱԱՀ-ի պարտավորությունների հաշվին:»:

Հոդված 6. Օրենքի 25-րդ հոդվածում՝

1) «այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման» բառերը փոխարինել «միասնական հաշվին մուտքագրման» բառերով,

2) «հաշվանցվել հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների հաշվին, և (կամ) պետական բյուջե հաշվեգրվող հարկային պարտավորությունների բացակայության պայմաններում վերադարձվել կամ հաշվանցվել հարկ վճարողի այլ պարտավորությունների դիմաց» բառերը փոխարինել «մուտքագրվել միասնական հաշվին» բառերով,

3) «Ընդ որում, ԱԱՀ-ի գումարների հաշվանցումը և (կամ) վերադարձն իրականացվում է օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:» նախադասությունը հանել,

4) վերջին պարբերության առաջին նախադասության երկրորդ «վերադարձման» բառը փոխարինել «միասնական հաշվին մուտքագրման» բառերով:

Հոդված 7. Օրենքի 33-րդ հոդվածում «ԱԱՀ-ի ճշտված հաշվարկներ» բառերը փոխարինել «ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական ճշտված հաշվարկներ» բառերով:

Հոդված 8. Օրենքի հավելված 1-ում (այսուհետ՝ հավելված 1)՝

1) բացառությամբ 8-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի և 25-րդ կետի, «այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման» բառերը համապատասխան հոլովաձևերով փոխարինել «միասնական հաշվին մուտքագրման» բառերով համապատասխան հոլովաձևերով,

2) 2-րդ կետում «հաշվանցվում և (կամ) վերադարձվում են» բառերը փոխարինել «ԱԱՀ-ի պարտավորությունների գծով հաշվանցվում և (կամ) մուտքագրվում են միասնական հաշվին» բառերով,

3) 3-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,

4) 4-րդ կետում «հաշվանցվում են հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների դիմաց և (կամ), պետական բյուջե հաշվեգրվող հարկային պարտավորությունների բացակայության դեպքում, վերադարձվում կամ հաշվանցվում են հարկ վճարողի այլ պարտավորությունների դիմաց՝ ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների գծով այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցում և (կամ) վերադարձ կատարելու» բառերը փոխարինել «մուտքագրվում են միասնական հաշվին՝ մուտքագրման ենթակա գումարի որոշման» բառերով,

5) 6-րդ կետում «վերադարձն» բառը փոխարինել «միասնական հաշվին մուտքագրումն» բառերով և հանել «վերադարձի» բառը,

6) 7-րդ կետում «վերադարձն» բառը փոխարինել «միասնական հաշվին մուտքագրումն» բառերով,

7) 8-րդ կետի «ա» և «բ» ենթակետերում «այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցում և (կամ) վերադարձ կատարելու» բառերը փոխարինել «մուտքագրման ենթակա գումարի որոշման» բառերով,

8) 9-րդ կետում «այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցում և (կամ) վերադարձ կատարելիս հաշվանցվում և (կամ) վերադարձվում է» բառերը փոխարինել «հարկ վճարողի միասնական հաշվին մուտքագրում կատարելիս մուտքագրվում է» բառերով,

9) 11-րդ կետում «այլ հարկային պարտավորությունների դիմաց ավել հաշվանցված և (կամ) ավել վերադարձված» բառերը փոխարինել «միասնական հաշվին ավել մուտքագրված» բառերով,

10) 12-րդ կետի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հարկային մարմինն ուսումնասիրության արձանագրության կամ ստուգման ակտի օրինակը հարկ վճարողին տրամադրելու միջոցով տեղեկացնում է հաշվանցման կամ միասնական հաշվին գումարի մուտքագրման իրավունքը լրիվ կամ մասնակիորեն ճանաչելու վերաբերյալ:»,

11) 14-րդ կետում՝

ա. «ԱԱՀ-ի գումարներն այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցելու» բառերը փոխարինել «միասնական հաշվին մուտքագրման ենթակա գումարի որոշման» բառերով,

բ. «Հաշվանցման» բառը փոխարինել «Մուտքագրման» բառով,

գ. «հաշվանցվում են հարկ վճարողի տվյալ հաշվետու ժամանակաշրջանի այլ հարկային պարտավորությունները» բառերը փոխարինել «մուտքագրվում են հարկ վճարողի միասնական հաշվին» բառերով,

դ. ուժը կորցրած ճանաչել վերջին նախադասությունը:

12) 19-րդ կետի «հաշվանցման և (կամ) վերադարձի» բառերը փոխարինել «այդ» բառով,

13) 20-րդ կետի վերջին նախադասությունում «այլ հարկային պարտավորությունների հաշվին հաշվանցումը և (կամ) վերադարձը» բառերը փոխարինել «միասնական հաշվին մուտքագրումը» բառերով,

14) ուժը կորցրած ճանաչել 21-րդ, 22-րդ և 28-րդ կետերը,

15) 23-րդ կետում «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի» բառերը փոխարինել «վերադաս հարկային մարմնի ղեկավարի» բառերով,

16) 25-րդ կետում՝

ա. «այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման» բառերը փոխարինել «միասնական հաշվին մուտքագրման ենթակա գումարի որոշման» բառերով,

բ. «բ» ենթակետից հանել «հաշվանցման և (կամ) վերադարձման մասին» բառերը,

գ. «գ» ենթակետում և վերջին պարբերությունում «այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման» բառերը փոխարինել «միասնական հաշվին մուտքագրման» բառերով:

Հոդված 9. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ սույն օրենքի 3-րդ հոդվածի և 4-րդ հոդվածի 1-ին կետի:

Սույն օրենքի 3-րդ հոդվածը և 4-րդ հոդվածի 1-ին կետը ուժի մեջ են մտնում 2016 թվականի հունվարի 1-ից, իսկ սույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին կետի գործողությունը տարածվում է 2015 թվականի հունվարի 2-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի և հարակից օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ կատարված առաջարկությունների և փոփոխությունների

Առաջարկության հեղինակը	Առաջարկության բովանդակությունը	Կատարված փոփոխությունները
«Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ		
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Առաջարկվում է ՓՄՁ սուբյեկտների կողմից շահագործվող հին սերնդի հսկիչ-դրամարկղային մեքենաները նոր սերնդի հսկիչ-դրամարկղային մեքենաներով փոխարինելու վերջնաժամկետը 2016 թվականի հունվարի 1-ի փոխարեն սահմանել 2017 թվականի հունվարի 1-ը:	Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:
«Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին»		
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Առաջարկվում է հարկ վճարողներին թույլ տալ շարունակել համարվել շրջանառության հարկ վճարող, եթե նրանց փոխկապակցված անձինք որևէ գործունեություն չեն իրականացրել:	Նախագծում կատարվել է համապատասխան լրացում: